ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հուլիսի 2026 թվականի N: 311 - Ա ք.Գյումրի

ՍԱՐԳԻՍ ՄԵՔԻՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ և 7-րդ կետերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության» 20-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական Սարգիս Մեքինյանի 2026 թվականի հուլիսի 20-ի զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի օգնական Սարգիս Մեքինյանին 2026 թվականի հուլիսի 20-ին գործուղել քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նահապետավանի միջնակարգ դպրոց», «Գյումրու թիվ 6 հիմնական դպրոց», «Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց», «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» և «Փոքրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հավակնորդների զարգացման ծրագրերի փորձաքննության ներկայացման և ընտրության համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N:1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2026 թվականի հուլիսի 20-ին:

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է